

**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N «ՍԱԾ ԳՀԾՁԲ-21/13»**

ք. Երևան

«05» ապրիլ 2021թ.

Միասնական սոցիալական ծառայությունը, ի դեմս Ծառայության գլխավոր քարտուղար Հ. Գևորգյանի, որը գործում է Ծառայության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «ԳԼՈԲ ԱՌԻԴԻՏ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Դ. Հարությունյանի (նույնականացման քարտ 001016153 տրված 11/01/2013, 003-ի կողմից), որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է ներքին աուդիտի ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 13500000 (տասներեք միլիոն հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը

կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:²¹ Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագրի կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է _____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ԱՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ ՈՒ

Միասնական սոցիալական ծառայություն
ՀՎՀՀ 02505511
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական
վարչություն
Հ/Կ 900011556355

(ստորագրություն)



Կ Ա Տ Ա Ր Ո Ղ

«Գլոբ Աուդիտ» ՍՊԸ
ք. Երևան, Ա. Մանուկյան 5
«Ամերիբանկ» ՓԲԸ
Հ/Կ 1570018946150100
ՀՎՀՀ 00131856

(ստորագրություն)



Հավելված N 1
 « 05 » 04 2021թ. կերպած
 «ԱՄԾ ԳՀԾՁԲ-21/13» ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆԱՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ		Մատուցման				
Իրավերը վճարողի նախատեսված չափաբաժնի համարը	Գնումների պլանով նախատեսված միջանցրկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	Չափման միավորը	Ընդհանուր գինը /ՀՀ դրամ/	Ընդհան ուր քանակը	Կասցեն	Ժամկետը
1	79211180/1 ՍՏԾ ներքին աուդիտի ծառայության ձեռք բերում՝ համաձայն ներկայացվող տեխնիկական բնութագրի /Հավելված N 1.1/	Տեխնիկական բնութագիրը	դրամ 135000000	1	Ք. Երևան, Նալբանդյան 13	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից հետո մինչև 2021թ. դեկտեմբերի 6-ը

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Միասնական սոցիալական ծառայություն
 ՀՀՀՀ 02505511
 ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական
 վարչություն
 ՀՀ 900011556355



ԿԱՏԱՐՈՂ

«Գլոբ Աուդիտ» ՍՊԸ
 ք. Երևան, Ա. Մանուկյան 5
 «Ամերիբանկ» ՓԲԸ
 ՀՀ 1570018946150100
 ՀՀՀՀ 00131856



ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

ՄԻԱՍՆԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԱՌՈՂԻՏԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ

1. ՆԵՐՔԻՆ ԱՌՈՂԻՏԻ ՇՐՋԱՆԱԿԸ ԵՎ ՄԻՋԱՎԱՅՐԸ

Ներքին աուդիտն անկախ, օբյեկտիվ հավաստիացման և խորհրդատվական գործառույթ է, որն ուղղված է Միասնական սոցիալական ծառայության (այսուհետ՝ Ծառայություն) գործունեության արդյունքի մեծացմանը և բարելավմանը և ընդգրկում է Ծառայության գործունեությանն առնչվող բոլոր գործառույթները և գործունեության արդյունքները, այսինքն՝ Ծառայության ներքին հսկողության ողջ համակարգը՝ ներառյալ բոլոր գործառույթայինները, ռեսուրսները, ծառայությունները, գործընթացները, ծրագրերը և այլ իրավահարաբերություններից առաջացող խնդիրները: Այն աջակցում է Ծառայությանը հասնել իր նպատակներին՝ ռիսկերի կառավարման, հսկողության ու կառավարչական գործընթացների համակարգված և կանոնակարգված գնահատման ու բարելավման միջոցով: Ներքին աուդիտն իրականացվում է ներքին աուդիտի ռազմավարական և տարեկան ծրագրերի հիման վրա՝ Ծառայության ղեկավարությանը հավաստիացման կամ խորհրդատվական ծառայություններ մատուցելու միջոցով: Ներքին աուդիտի ծառայությունների մատուցման նպատակով հրավիրված անձը (այսուհետ՝ Կատարող) իր աշխատանքների կազմակերպման փուլում, նախնառաջ, պետք է գնահատի Ծառայության ներքին աուդիտի միջավայրը, որը ներառում է Ծառայության ամբողջ համակարգը՝ Ծառայության կառուցվածքը և կառուցվածքի տարրերի գործառույթները և դրանց նկարագրությունները՝ (Գործառույթը կամ գործընթացը Ծառայության նպատակին հասնելուն ուղղված հաջորդական և փոխկապակցված գործողությունների, դրանց կատարման պայմանների և անհրաժեշտ ռեսուրսների ամբողջությունն է), գնահատի ֆինանսական կառավարման և ղեկավարության կողմից ներդրված ներքին հսկողության հետ կապված գործառույթները, այսինքն՝ Ծառայության աուդիտի բոլոր հնարավոր գործառույթները, առաջադրանքներն ու աուդիտի ենթակա գործընթացները և առաջարկների ներկայացման միջոցով օժանդակի ղեկավարությանը ձեռնարկել միջոցառումներ՝ Ծառայության նպատակներին հասնելու և դրանում հնարավոր ռիսկերը կառավարելու համար՝ Ծառայության հիմնական և աջակցող մասնագիտական կառուցվածքային կառուցվածքային ստորաբաժանումների գործառույթների շրջանակներում՝ համաձայն հավելվածի:

2. ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ

Կատարողը պարտավոր է Պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից ձեռնարկի ներքին աուդիտի մասին օրենսդրությամբ և Ծառայության ներքին աուդիտի 2021 թվականի տարեկան ծրագրով սահմանված բոլոր այն գործողությունների կատարումը այնպիսի ժամկետներում, որպեսզի՝ 2019 թվականն ընդգրկող ժամանակահատվածից սկսած մինչև պայմանագրի գործողության ժամկետի ավարտը ապահովի սույն տեխնիկական բնութագրով և ներքին աուդիտի մասին օրենսդրությամբ սահմանված ներքին աուդիտի ծառայությունների մատուցումը և այդ սահմանված պարտականության կատարման նպատակով Կատարողը պարտավոր է:

ա) կազմել ներքին աուդիտի որակի երաշխավորման և բարելավման ծրագիր, ապահովել դրա կատարումը:

բ) ներքին աուդիտի մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով, ինչպես նաև Ղեկավարի կողմից մատնանշված խնդիրների հիման վրա կազմել ներքին աուդիտի երեք տարվա ռազմավարական և տարեկան ծրագրերը՝ հիմք ընդունելով կազմակերպության աուդիտի իրականացման անհրաժեշտության գնահատականները (ռիսկերի գնահատումները, ինչպես նաև նախորդ ժամանակահատվածներում կազմակերպությունում իրականացված ներքին աուդիտների եզրակացությունները, բացահայտված խնդիրները, ներկայացված առաջարկությունները, դրանց գծով իրականացված գործողությունները և դրանց կատարման վերաբերյալ հաշվետվությունները), հստակ նշելով ներքին աուդիտի ենթակա Միավորների քանակը, նկարագրելով ներքին աուդիտի ենթակա և իրականացման հիմնական ոլորտները, ստորաբաժանումների մասնակցության առանձնահատկությունները, ինչպես նաև աջակցությունը, աուդիտների ժամկետները (հաճախականությունը), ելնելով առկա ռեսուրսներից աուդիտի նպատակներին արդյունավետ կերպով հասնելու համար ընտրված աուդիտի միջոցները,

գ) իրականացնի արդյունավետ ներքին աուդիտ, գնահատելով՝

✓ ֆինանսական կառավարման և հսկողության համակարգերը, այսինքն՝ ֆինանսական կառավարման, հսկողության համակարգերի համապատասխանությունը արդյունավետությունը և հուսալիությունը հետևյալ պայմաններին՝

- Ծառայության ղեկավարության կողմից ռիսկերի բացահայտում, գնահատում և կառավարում, մասնավորապես՝ Ղեկավարի կողմից կատարված ռիսկերի գնահատման հավաստիությունը, Ղեկավարի կողմից իրականացվող ռիսկերի դիտարկումը և արդյունքների ներկայացումը, ինչպես նաև ռիսկերի և հսկողության համակարգի հետ կապված խնդիրների լուծումը, Ղեկավարի կողմից ներկայացված հաշվետվություններն այն դեպքերի վերաբերյալ, երբ ռիսկերը գերազանցել են դրանց ընդունելի միջակայքը, և այդ հաշվետվություններին Ծառայության կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների ղեկավարների արձագանքը,

- Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը և կազմակերպության գործունեությանն առնչվող այլ պայմաններին (պայմանագրերին, գերատեսչական նորմատիվ ակտերին և այլնին) համապատասխանություն,

- տնտեսող, արդյունավետ և օգտավետ գործառույթներ,
- տեղեկությունների վստահելիություն և ամբողջականություն,
- կորուստներից, չարաշահումներից և վնասներից ակտիվների ու ռեսուրսների պահպանման հուսալիություն,

- առաջադրանքների կատարում և նպատակների իրագործում,
- Ծառայության ղեկավարության կողմից սահմանված կանոնների (քաղաքականության), ընթացակարգերի և գործողությունների ամբողջություն:

դ) տրամադրի հավաստիացում Ծառայության կառավարչական գործընթացների, ներքին հսկողության համակարգի, ռիսկերի կառավարման (ռիսկերի բացահայտման, գնահատման և հսկման) գործընթացների համակարգված և կարգավորված գնահատման վերաբերյալ և ներկայացնի հսկողական համակարգերի և ռիսկերի կառավարման ընթացակարգերի և հսկողական համակարգերում բացահայտված թերությունների շտկման բարելավման առաջարկություններ, օժանդակի Ղեկավարին հասնել իր առջև դրված նպատակներին՝ բարելավելով համակարգերը և ծառայությունները արդյունավետ իրականացման գործում, մասնավորապես՝

- Ծառայությունում առկա կառավարչական գործընթացները համապատասխանում են/չեն համապատասխանում/ մասամբ են համապատասխանում նշանակալի ռիսկերի բացահայտման և դիտարկման նպատակին,

- ներդրված ներքին հսկողական համակարգերը գործում են/չեն գործում արդյունավետ կերպով,
- ռիսկերի կառավարման վերաբերյալ հաշվետվողականության գործընթացները հուսալի են/հուսալի չեն,
 - Ղեկավարը Ծառայության այլ պաշտոնատար անձանցից ստանում է/չի ստանում/մասամբ է ստանում պատշաճ որակի և հուսալի տեղեկատվություն կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների մակարդակով և ընդհանուր համակարգի հսկողության վերաբերյալ ստորաբաժանումների նկատմամբ հսկողության, ինչպես նաև կապալառուների կամ ծառայություն մատուցողների հսկողության համակարգերի (եթե այդ հսկողությունն էական է կազմակերպության նպատակների իրագործման համար) վերաբերյալ,

- Ծառայության ստորաբաժանումների ղեկավարները պատշաճորեն կատարում են իրենց վրա դրված պարտականությունները (ներքին հսկողության, ռիսկերի կառավարման և կառավարչական գործընթացների համակարգերի ներդրումը և պահպանումը):

ե) ապահովի «Ներքին աուդիտի մասին» օրենքով աուդիտի ստորաբաժանման, ներառյալ՝ ստորաբաժանման ղեկավարի համար սահմանված իրավունքների և պարտականությունների կատարումը և իր առնվազն մեկ աշխատակցի ներկայությունը Ծառայությունում, որը պատասխանատու է ներքին աուդիտի օրենսդրությամբ նախատեսված բոլոր պահանջների կատարման համար, կատարի ներքին աուդիտի կոմիտեի քարտուղարի պարտականությունները, հաշվետու լինի Ղեկավարին և ներքին աուդիտի կոմիտեին, ինչպես նաև բացի ներքին աուդիտի գործառույթներից, չիրականացնի Ծառայության կառավարման որևէ գործառույթ,

զ) Ղեկավարին, ներքին աուդիտի կոմիտեին և այլ շահագրգիռ կողմերին տրամադրի հիմնավորված հավաստիացում, որ ներքին աուդիտը գործում է արդյունավետ և օգտավետ, իր կանոնակարգի համաձայն, որն իր հերթին համապատասխանում է «Ներքին աուդիտի մասին» օրենքին ինչպես նաև ներքին աուդիտը դիտվում է որպես Ծառայության գործառնությունները բարելավող գործունեություն՝ իր ներկայությամբ բացառելով խարդախության, վատնումների և այլ չարաշահման դեպքերի տեղի ունենալու հավանականությունը,

է) օժանդակի Ծառայությանը լինել հաշվետու ողջ հանրության առջև՝ գնահատելով վերջիններիս կողմից օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված պահանջների կատարումը և իրականացված գործառույթների օգտավետությունը և արդյունավետությունը, օբյեկտիվ կարծիք տրամադրի վերահսկող մարմիններին Ղեկավարի կողմից ներկայացված ֆինանսական գործունեության և այլ կատարողականի վերաբերյալ հաշվետվությունների արժանահավատության և հավաստիության վերաբերյալ,

ը) կազմի և Ղեկավարին ու ներքին աուդիտի կոմիտեին ներկայացնի իրականացված աուդիտորական առաջադրանքների արդյունքների վերաբերյալ ներքին աուդիտի մասին օրենսդրությամբ նախատեսված հաշվետվությունները, որը կներառի՝ ինչպիսի աշխատանք է կատարվել և որն է այդ աշխատանքների կատարման պատճառը, ներքին աուդիտի շրջանակներում հայտնաբերված բոլոր բացահայտումները և

եզրակացությունները, կառուցողական առաջարկություններ՝ Ծառայության գործունեությունը բարելավելու հարցում՝ Ղեկավարին օգնելու նպատակով,

թ) իրականացնի վերստուգման գործընթաց՝ աուդիտի ենթարկվող Միավորի ղեկավարության կողմից իրականացված՝ աուդիտի արդյունքում բացահայտված թերությունների շտկման գործողությունների համապատասխանությունը, արդյունավետությունը և ժամանակին լինելը գնահատելու նպատակով և պարզելու թե արդյոք աուդիտի ենթարկված Միավորի Ղեկավարը ձեռնարկել է իրավիճակը շտկող գործողություններ կամ իրագործել է ներկայացված առաջարկությունները, ձեռք են բերվել ցանկալի արդյունքները, թե Ղեկավարը և ներքին աուդիտի կոմիտեն իրենց վրա են վերցրել առաջադրանքի արդյունքներից բխող միջոցառումների չիրականացման ռիսկերը և պատշաճորեն փաստաթղթավորի վերստուգման գործողությունները,

ժ) Ղեկավարի հանձնարարությամբ համագործակցի Հայաստանի Հանրապետության հանրային հատվածի կազմակերպություններում օրենքով սահմանված կարգով հսկողություն (վերահսկողություն) իրականացնող պետական կառավարման համակարգի մարմինների և Հայաստանի Հանրապետության հաշվեքննիչ պալատի հետ՝ նրանց աջակցելու և համապատասխան տեղեկատվություն տրամադրելու նպատակով,

ի) կազմակերպի աշխատանքային փաստաթղթերի պատշաճ փաստաթղթավորում և պահպանում:

3. ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ ՄԱՏՈՒՑՈՂ ԿԱՏԱՐՈՂԻ ՆԿԱՏԱՄԲ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՀԱՆՋՆԵՐ

ա) Կատարողը ինչպես նաև ծառայությունների մատուցման համար ներգրավված աուդիտորները պետք է ընդգրկված լինի, Լիազոր մարմնի կողմից վարվող՝ «Ներքին աուդիտի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 4-րդ մասի 5-րդ կետով սահմանված ներքին աուդիտորների՝ որակավորված անհատների և կազմակերպությունների ցանկում,

բ) Կատարողի՝ սույն տեխնիկական բնութագրով նախատեսված ծառայությունների մատուցման համար ներգրավված աուդիտորները պետք է ունենան աուդիտի ոլորտում (ներքին և (կամ) արտաքին) մասնագիտական գործունեության առնվազն 3 տարվա փորձ, համատեղությամբ չաշխատեն ներքին և/կամ արտաքին աուդիտի ծառայություններ մատուցող այլ կազմակերպություններում, կամ այլ կազմակերպություններում աշխատեն որպես ներքին աուդիտոր: Ներքին աուդիտի տարեկան ծրագիրը կազմելուց և անհրաժեշտ մարդկային ռեսուրսները հաշվարկելուց հետո՝ Կատարողն, անհրաժեշտության դեպքում, կարող է ներգրավել միայն նշված չափանիշներին համապատասխանող լրացուցիչ աշխատանքային ռեսուրսներ, կազմված ռազմավարական և տարեկան ծրագրերը պատշաճ կերպով իրականացնելու համար:

Կատարողը ներքին աուդիտի աշխատանքները պետք է կատարի ներքին աուդիտի մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին և Հայաստանի Հանրապետության ներքին աուդիտի մասնագիտական գործունեության ստանդարտներին համապատասխան և պահպանի ներքին աուդիտորի վարքագծի կանոնները:

4. ԼԻԱԶՈՐ ՄԱՐՄՆԻՆ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

Կատարողը Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությանը՝ որպես «Ներքին աուդիտի մասին» օրենքով սահմանված լիազոր մարմին (այսուհետ՝ Լիազոր մարմին) պետք է տրամադրի ներքին աուդիտի մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված հետևյալ տեղեկատվությունը.

ա) «Ներքին աուդիտի մասին» օրենքի 13-րդ հոդվածի 4-րդ մասի 5-րդ կետով սահմանված Լիազոր մարմնի կողմից հրապարակված ցանկում ընդգրկվելու համար ներկայացված տեղեկություններում կամ փաստաթղթերում, այդ թվում՝ Կատարողի կամ դրա աշխատող համարվող ներքին աուդիտորների մասին փաստաթղթերում փոփոխություններ կատարելու դեպքում այդ փոփոխությունների մասին տեղեկատվություն՝ դրանք ուժի մեջ մտնելուց հետո 15 աշխատանքային օրվա ընթացքում.

բ) ներքին աուդիտորներին վերապատրաստելու անհրաժեշտության և վերապատրաստման ծրագրի ուղղվածության մասին առաջարկություններ.

գ) ռազմավարական ծրագիրը, ներառյալ դրանում կատարված փոփոխությունները ներքին աուդիտի մասին օրենսդրությամբ սահմանված կարգով վավերացվելու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում՝ ի գիտություն.

դ) հաջորդող տարվա տարեկան ծրագիրը՝ մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 1-ը.

ե) հաշվետվություն՝ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2012 թվականի փետրվարի 17-ի N 143-Ն հրամանի 9-րդ հավելվածում ներկայացված 2-րդ ձևով՝ ներքին աուդիտի կանոնակարգի հաստատումից կամ փոփոխության ուժի մեջ մտնելուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում.

զ) ներքին աուդիտի տարեկան ամփոփ հաշվետվություն՝ մինչև հաջորդ տարվա մարտի 1-ը.

է) կազմակերպության կողմից հաստատված ներքին գնահատման ստուգաթերթերը և հարցաշարերը ու դրանցում կատարված փոփոխությունները՝ հաստատումից հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում.

ը) ներքին գնահատման արդյունքները, միջոցառումների անհրաժեշտ ծրագրերը և դրանց իրականացման արդյունքները՝ տարեկան առնվազն մեկ անգամ, ցանկալի է տարեկան ամփոփ հաշվետվության հետ մեկտեղ:

5. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ և ԿՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ

Ծառայության մատուցման ժամկետը սահմանվում է կնքվող պայմանագրով, որի հաշվարկը չի ներառում պատվիրատուի կողմից հաշվետվությունները հաստատելու հետ կապված ժամկետները:

Հաշվետվությունները ներկայացվում են յուրաքանչյուր երեք ամիսը մեկ՝ մինչև հաջորդող առաջին ամսվա 15-րդ օրը: Հաշվետվությանը կից ներկայացվում է տվյալ ժամանակահատվածում մատուցված ծառայության բնույթը, բովանդակությունը և դրա փաստաթղթավորման արդյունքը, ինչպես նաև գրավոր հավաստում, որ ծառայությունը մատուցվել է 3-րդ բաժնի բ) կետում նշված չափանիշներին բավարարող աշխատանքային ռեսուրսների կողմից:

Պատվիրատուի կողմից հաշվետվությունը քննարկվում և հաստատվում կամ առարկություններով կատարողին վերադարձվում է այն ստանալուն հաջորդող 10 աշխատանքային օրվա ընթացքում: Հաշվետվությունը հաստատվում է կազմակերպության ղեկավարի որոշմամբ, որի հիման վրա այն կայացվելուն հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում պատասխանատու ստորաբաժանման ղեկավարը հաստատում է հանձնման-ընդունման արձանագրությունը:

Մատուցված ծառայության դիմաց վճարումներն իրականացվում են յուրաքանչյուր անգամ ներկայացված հաշվետվությունը հաստատվելու դեպքում՝ պայմանագրով նախատեսված վճարման ժամանակացույցով սահմանված ամսին:

6. ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Աշխատանքային ռեսուրսների մասով, ընտրված մասնակիցը կնքված պայմանագրի հետ ներկայացնում է նաև ծառայությունների մատուցման համար ներգրավված աուդիտորների վերաբերյալ, իր կողմից ստորագրված գրավոր հավաստագրում և հայտարարություն՝ «Ներքին աուդիտի մասին» օրենքի 9-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված սահմանափակումների բացակայության մասին:

7. ԱՅԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- 1) Ծառայության գործառույթները սահմանված են Ծառայության կանոնադրությամբ,
- 2) Կատարողին կտրամադրվեն Ծառայության ներքին աուդիտի օրենսդրությունից բխող ներքին իրավական ակտերի օրինակներ,
- 3) Կատարողին կտրամադրվեն Ծառայության տարեկան և եռամյա ռազմավարական ծրագրերը,
- 4) Ներքին աուդիտի հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ թվում հետևյալ իրավական ակտերով.

I. «Ներքին աուդիտի մասին» օրենք.

II. Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի օգոստոսի 11-ի N 1233-Ն որոշում.

III. Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2011 թվականի դեկտեմբերի 8-ի N 974-Ն հրաման.

IV. Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2012 թվականի փետրվարի 17-ի N 143-Ն հրաման.

V. Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2012 թվականի փետրվարի 23-ի N 165-Ն հրաման.

VI. Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի մայիսի 31-ի N 732-Ն որոշում.

VII. Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2012 թվականի նոյեմբերի 30-ի N 1050-Ն հրաման.

VIII. Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2012 թվականի դեկտեմբերի 12-ի N 1096-Ն հրաման.

IX. Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի օգոստոսի 8-ի N 896-Ն որոշում.

X. Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի փետրվարի 13-ի N 176-Ն որոշում.

XI. Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2014 թվականի օգոստոսի 21-ի N 541-Ն հրաման:

Հավելված

ՄԻԱՍՆԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏԻ ՄԻՋԱՎԱՅՐԸ ԵՎ ՀԱՇՎԵՏՈՒ
ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ ԱՈՒԴԻՏԻ ԵՆԹԱԿԱ ՄԻԱՎՈՐՆԵՐԸ

ՄԻԱՍՆԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

ՄԻԱՍՆԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ			
Հ/ Հ	Ներքին աուդիտի ենթակա միավորներ	Հ/ Հ	Հաշվետու ժամանակաշրջանում ներքին աուդիտի ենթակա միավորներ

	Անվանում	Հասցե		Անվանում	Հասցե	Ռիսկային խումբ
1	Կենսաթոշակների, նպաստների և դրամական այլ վճարների վարչություն	ք.Երևան, Նալբանդյան 13	1	ՍԱԾ Գնումների գործընթաց	ք.Երևան, Նալբանդյան 13	Բարձր
1.1	Կենսաթոշակների, դրամական այլ վճարների և մեթոդական աջակցության բաժին	ք.Երևան, Նալբանդյան 13	2	Կենսաթոշակների, նպաստների և դրամական այլ վճարների վարչություն	ք.Երևան, Նալբանդյան 13	Միջին
1.2	Նպաստների բաժին	ք.Երևան, Նալբանդյան 13	2.1	Կենսաթոշակների, դրամական այլ վճարների և մեթոդական աջակցության բաժին	ք.Երևան, Նալբանդյան 13	Միջին
2	Տեղեկատվական ապահովման և տեղեկատվական համակարգի շահագործման վարչություն	ք.Երևան, Նալբանդյան 13	2.2	Նպաստների բաժին	ք.Երևան, Նալբանդյան 13	Միջին
2.1	Տեղեկատվական Տեխնալոգիաների զարգացման բաժին	ք.Երևան, Նալբանդյան 13	3	Տեղեկատվական ապահովման և տեղեկատվական համակարգի շահագործման վարչություն	ք.Երևան, Նալբանդյան 13	Զգայուն
2.2	Տեղեկատվական հոսքերի կառավարման բաժին	ք.Երևան, Նալբանդյան 13	3.1	Տեղեկատվական հոսքերի կառավարման բաժին	ք.Երևան, Նալբանդյան 13	Զգայուն
2.3	Տեղեկատվական համակարգերի շահագործման բաժին	ք.Երևան, Նալբանդյան 13	3.2	Տեղեկատվական համակարգերի շահագործման բաժին	ք.Երևան, Նալբանդյան 13	Զգայուն
3	Ֆինանսատնտեսագիտական և հաշվապահական հաշվառման վարչություն	ք.Երևան, Նալբանդյան 13	4	Ամփոփ վերլուծությունների և մոնիթորինգի վարչություն	ք.Երևան, Նալբանդյան 13	Զգայուն
3.1	Ֆինանսատնտեսագիտական բաժին	ք.Երևան, Նալբանդյան 13	4.1	Ամփոփ վերլուծությունների և ռիսկերի կառավարման բաժին	ք.Երևան, Նալբանդյան 13	Զգայուն
3.2	Հաշվապահական հաշվառման բաժին	ք.Երևան, Նալբանդյան 13	4.2	Մոնիթորինգի բաժին	ք.Երևան, Նալբանդյան 13	Զգայուն
4	Ամփոփ վերլուծությունների և մոնիթորինգի վարչություն	ք.Երևան, Նալբանդյան 13	5	Երևան քաղաքի նշանակման վարչություն	ք.Երևան, Մամիկոնյանց 39ա	Զգայուն

4.1	Ամփոփ վերլուծությունների և ռիսկերի կառավարման բաժին	ք.Երևան, Նալբանդյան 13	6	Արտաշատի տարածքային բաժին	ք. Արտաշատ, Իսակովի 47	Ցածր
4.2	Մոնիթորինգի բաժին	ք.Երևան, Նալբանդյան 13	7	Արարատի տարածքային բաժին	ք. Վեդի, Արարատյան 55	Ցածր
5	Իրավաբանական վարչություն	ք.Երևան, Նալբանդյան 13	8	Մասիսի տարածքային բաժին	ք. Մասիս, Կենտրոնական հրապարակ 4	Միջին
5.1	Իրավական ապահովման բաժին	ք.Երևան, Նալբանդյան 13	9	Արմավիրի տարածքային բաժին	ք. Արմավիր, Աբովյան 137/1	Ցածր
5.2	Դատական գործերի բաժին	ք.Երևան, Նալբանդյան 13	10	Բաղրամյանի տարածքային բաժին	գ.Բաղրամյան, Բաղրամյան 1	Ցածր
6	Կազմակերպություններ, քաղաքացիների և օտարերկրյա պետությունների հետ համագործակցության վարչություն	ք.Երևան, Նալբանդյան 13	11	Էջմիածնի տարածքային բաժին	ք. Էջմիածին, Մաշտոցի 1	Ցածր
6.1	Կազմակերպությունների և քաղաքացիների հետ համագործակցության բաժին	ք.Երևան, Նալբանդյան 13	12	Գյումրու տարածքային բաժին	ք. Գյումրի, Խրիմյան Հայրիկ 46/1	Միջին
6.2	Օտարերկրյա պետությունների հետ համագործակցության բաժին	ք.Երևան, Նալբանդյան 13	13	Ամասիայի տարածքային բաժին	գ. Ամասիա, 25 փող., 4-րդ շենք	Ցածր
7	Քարտուղարություն	ք.Երևան, Նալբանդյան 13	14	Ախուրյանի տարածքային բաժին	գ. Ախուրյան, Գյումրու խճ. 42	Ցածր
7.1	Ընդհանուր բաժին	ք.Երևան, Նալբանդյան 13	15	Մարալիկի տարածքային բաժին	ք. Մարալիկ, Մաղաթյան 1	Ցածր
7.2	Քաղաքացիների ընդունելիության բաժին	ք.Երևան, Նալբանդյան 13	16	Աշոցքի տարածքային բաժին	գ. Աշոցք, Հրապարակ 1	Ցածր
8	Անձնակազմի կառավարման բաժին	ք.Երևան, Նալբանդյան 13	17	Արթիկի տարածքային բաժին	ք. Արթիկ, Ազատության հրապարակ 1/2	Ցածր

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Սոցիալական ապահովության ծառայություն
ՀՎՀՀ 02505511

ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն

ՀՀ 900011556355



ԿԱՏԱՐՈՂ

«Գլոբ Աուդիտ» ՍՊԸ

ք. Երևան, Ա. Մանուկյան 5

«Ամերիբանկ» ՓԲԸ

Հ/Հ 1570018946150100

ՀՎՀՀ 00131856



Կատարված/ Կ.Տ

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

«Որամ»

		Ծառայության														
հրավեր ով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2021թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում													
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	ԸՆԴԱՄԵՆԸ	
1	79211180/1	Ներքին առդիտի ծառայություն	-	-	1350000	4725000	4725000	4725000	8100000	8100000	8100000	13500000	13500000	13500000	13500000	13500000

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Միասնական սոցիալական ծառայություն
 ՀՎՀՀ 02505511
 ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական
 վարչություն
 Հ/Հ 900011556355

[Handwritten signature]

/ստորագրություն/
 Կ.Տ



ԿԱՏԱՐՈՂ

«Գլոբ Աուդիտ» ՍՊԸ
 ք. Երևան, Ա. Մանուկյան 5
 «Ամերիբանկ» ՓԲԸ
 Հ/Հ 1570018946150100
 ՀՎՀՀ 00131856



/ստորագրություն/
 Կ.Տ

Պայմանագրի կողմ

Պատվիրատու

գտնվելու վայրը _____

հհ _____

հվհհ _____

գտնվելու վայրը _____

հհ _____

հվհհ _____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ « » « » 20 թ.

Պայմանագրի համարը՝ _____

Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

Մատուցված ծառայությունների							
անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
		ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց

Ծառայությունն ընդունեց

ստորագրություն

ազգանուն, անուն
Կ.Տ.

ստորագրություն

ազգանուն, անուն
Կ.Տ.

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____-ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման
նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

ազգանուն, անուն

ստորագրություն

Ընդունեց

հայտը նախագծած ներկայացուցիչ՝

ազգանուն, անուն

ստորագրություն